

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/2

11 փետրվարի 2014 թ.

Քննարկվեց «Ռուբինա և Դավիթ» ՍՊԸ 22.01.2014 թ-ի դիմումով բերված բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 14.01.2014 թ-ի թիվ 2221627 արձանագրության դեմ:

«Ռուբինա և Դավիթ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

20.01.2014 թ-ին Շենգավիթի հարկային տեսչությանից «Ռուբինա և Դավիթ» ՍՊ ընկերությունը ստացել է թիվ 2221627 արձանագրությունը՝ հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ, որում ՀՏ-ի աշխատակիցները նշում են, թե իբր կատարել են գնումներ Գ.Նժդեհի 30-27 հասցեում գտնվող «Ռուբինա և Դավիթ» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) հրուշակեղենի խանութից և ընկերությունը թույլ է տվել հսկիչ-դրամարկղի կիրառման կանոնների խախտում:

Տվյալ արձանագրության վերաբերյալ հայտնվում է, որ արձանագրությունն իրականությանը չի համապատասխանում, իրականում դեպքը տեղի է ունեցել հետևյալ կերպ:

14.01.2014 թ-ին ժամը 17:00-ի սահմաններում խանութ է մտել տարածքային հարկային տեսչության տեսուչ Արմեն Քեքեջյանը և խնդրել է հանել Z հաշվետվությունը: Նրան թույլ է տրվել հանել հաշվետվությունը, քանի որ նա հանդիսանում է տարածքը սպասարկող տեսուչը: Քեքեջյանը հաշվետվությունը հանելուց և երկար նայելուց հետո տեղեկացրել է Նարեկ Տաշչյանին, ով հանդիսանում է խանութի վաճառողը, որ հաշվետվության մեջ բացակայում է 550 դրամը, և հորինել է, որ մի կին գնում է կատարել խանութից 550 դրամի չափով, որի դիմաց նրան կտրոն չի տրամադրվել: Երբ տեսուչին հարց է ուղղվել, թե ինչ կնոջ մասին է խոսքը և ուր է այդ կինը, տեսուչը պատասխանել է, որ այդ կինը եղել է իրենց աշխատակցուհին, այնինչ արձանագրությունում նշված է, որ հսկիչ գնումը կատարել է տարածքը սպասարկող տեսուչ Հովիկ Ազարյանը: Ընկերության ներկայացուցչի օրինական պահանջներին նա այլևս չի պատասխանել և որևէ փաստաթուղթ այդ ընթացքում ցույց չտալով հեռացել է: Քեքեջյանը վերադարձել է 40 րոպե անց տարածքը սպասարկող մյուս տեսուչ Հովիկ Ազարյանի հետ, որին ընկերության աշխատակիցները ճանաչում են և այդ օրը չէին տեսել:

Հովիկ Ազարյանը ներս մտնելուն պես ցույց է տվել Z հաշվետվությունը և ասել, որ 550 դրամի գնումը բացակայում է, որից հետո նրանք ցույց են տվել ինչ-որ փաստաթղթեր և հեռացել:

Հաջորդ օրը, երբ ընկերության ներկայացուցիչը խոսել է հարկային տեսչության աշխատակիցների և իրենց ղեկավարի հետ, թվացել է, թե նրանք հասկացել են և դա ընդամենը թյուրիմացության արդյունք է: Չնայած դրան, կազմվել է թիվ 2221627 արձանագրությունը և պահանջվել է վճարել 300.000 դրամ տուգանք, այն դեպքում, երբ ընկերությունը գտնվում է ֆինանսական ծանր վիճակում, քանի որ խանութում առկա ապրանքային մնացորդի ընդհանուր գումարը չի գերազանցում 300.000 դրամը: Նման դեպքում հարկային տեսչության գործողության հետևանքով ընկերությունը գտնվելով ֆինանսական ծանր վիճակում կարող է սնանկանալ:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է հանձնարարել ստուգել և քննության առնել թիվ 2221627 արձանագրությունը, վերանայել հարկային ծառայողների

անօրինական գործողությունները և դրանցից բխող չհիմնավորված արձանագրությունները:

« ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

« ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և արձանագրությունը կազմած անձանց բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Նախ նշվեց, որ համաձայն « ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 10.01.2014 թ-ի թիվ 2221627 հանձնարարագրի «Ռուբինա և Դավիթ» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հոսկիչ գնում): Արդյունքում կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 14.01.2014 թ-ի թիվ 2221627 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որում մասնավորապես նշվել է.

Հովիկ Ազարյանի կողմից 14.01.2014 թ-ին ժամը 16:40-ին ք.Երևան, Գ.Նժդեհի 30-27 հասցեում գտնվող հրուշակեղենի խանութից կատարվեց հսկիչ գնում 550 դրամի չափով՝ 1 հատ շոկոլադե սալիկ և 1 տուփ մաստակ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով:

Նարեկ Տասյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և չտրամադրեց համապատասխան գումարի ՀԴՄ կտրոնը:

Ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 16:43-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց «Z» հաշվետվություն՝ 15000 դրամ ընդհանար գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 550 դրամը, ժամը 16:45-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոնը, որից հետո տպվեց վերադարձի կտրոնը կատարված վճարման արժեքի չափով, և ժամը 16:46-ին նորից դուրս բերվեց «Z» հաշվետվությունը՝ 550 դրամ ընդհանուր գումարով:

Ուսումնասիրությամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են « Կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Քննարկման ընթացքում հսկիչ գնումն իրականացրած Հովիկ Ազարյանը նշեց, որ իր կողմից 14.01.2014 թ-ին ժամը 16:40-ին ք.Երևան, Գ.Նժդեհի 30-27 հասցեում գտնվող հրուշակեղենի խանութից կատարվել է 550 դրամի հսկիչ գնում: Մասնավորապես, գնվել է 1 հատ շոկոլադե սալիկ և 1 տուփ մաստակ, որի դիմաց վճարված գումարը վճառող Նարեկ Տասյանի կողմից չի մուտքագրվել ՀԴՄ և չի տրամադրվել ՀԴՄ կտրոն: Այնուհետև Հովիկ Ազարյանը դուրս է եկել խանութից և դրսում սպասող Արմեն Քեքեջյանին հայտնել է կատարված հսկիչ գնման դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրելու մասին: Արմեն Քեքեջյանը մտել է խանութ, ներկայացնելով ծառայողական վկայականը և հանձնարարագիրը հայտնել է կատարված հսկիչ գնման դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրելու մասին: Որից հետո ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը (որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել), մուտքագրվել է կատարված վճարման արժեքը՝ 550 դրամը, դուրս է բերվել կտրոն և կրկին անգամ դուրս է բերվել «Z» հաշվետվությունը:

Հսկիչ գնումն իրականացրած անձանց կողմից կազմվել է նաև հսկիչ գնումների արդյունքում վաճառված ապրանքների հետընդունման 14.01.2014 թ-ի թիվ 2221627 ակտը, որով հետ են վերադարձվել հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքները:

Հսկիչ գնումն իրականացրած Հուլիկ Ազարյանը նշեց նաև, որ ընկերության ներկայացուցչի պնդումները հսկիչ գնումն այլ կողմից կատարված լինելու վերաբերյալ հիմնավոր չեն, քանի որ հսկիչ գնումը կատարելու պահին ընկերության ներկայացուցիչը խանութում ներկա չի գտնվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները Հանձնաժողովը գտնում է, որ իրականացված հսկիչ-դրամարկային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրությամբ հիմնավորվել է ընկերության կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները խախտելու, այն է՝ հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքների դիմաց վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրելու և ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը:

Հանձնաժողովի 31.01.2014 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն արձանագրությունը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ):

Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Արձանագրությունը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ